ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ

ԱՆՈՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Հրամանաւ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ

ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՕԼՍՈՅ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

A 13883

ԳՐԵՑ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԵՒ ՔԱՐՈԶԻՉ ԽԱՄԻՒՂԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1864 =

[illegible]

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՍՏՈՒԱԾՀՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ԱՆՈՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

A I 13883

Յաւիտենական արդարութեան մարդուս շնորհած անձնիշխան կամքին առջև երկու ճամբայ կը բացուի. մէկով Աստուծմէ եկած մարդն ուղղակի Աստուած կերթայ, միւսով ի կորուստ։

Յ Աստուած առաջնորդող ճամբան Աստուծոյ Յայտնութիւնն է, որուն մէջ դիժուարութիւններ կ'ելնեն մարդուն դիմացը։ Այս ճամբան նեղ է, և Յայտնութեան Աստուածային հեղինակին Դողգոթա ելնելուն պէս համբերութիւններ և զոհեր կը պահանջէ։ Դիժուարութիւններուն յաղթելու համար հաւատք, յոյս, սէր, այս անպծելի զբաղեներով պէտք է որ մարդս սպառազինի. իւր պարտաւորութիւնները կատարելու համար Աստուածային Յայտնութեամբ շնորհուած օրէնքներուն հպատակիլ պէտք է. և որովհետև Աստուած զմարդը երջանկութեան համար ստեղծած է, այդ ճամբուն մէջ մարդուս թէ մարմնաւոր և թէ հոգեւոր աչքերը շլացնող ո՛ և իցէ օրէնք, և ճշմարտութեան երեսցմէ ուռնեցող ո՛ և իցէ թեքադրութիւնք՝ որ Աստուծմէ չեն բղխիր, մարդուս հոգեւոր և մարմնաւոր երջանկութիւնը աղաւաղելու խաբուսիկ հնարքներ են, որ մարդկային ցե-

ՀԱՅԿ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

զին նախանձորդը չդադարիր նիւթելէ։ Սու-
տը ճշմարտի երևցմամբ ինչէր չէ ըրած՝ ի
սկզբանէ անտի մարդկային ազգին։ Քրիստո-
սի ճամբուն հակառակ՝ ի՞նչ լայն ճամբաներ
չէ ցուցուցած և մարդուն անձնիշխանու-
թիւնն անձնասիրութեան միջոցաւ ի՞նչ գա-
հավէժ անգունդներու մէջ չէ գլորած։ Յա-
կոբայ առաջին ճշմարիտ լուայն առէ՝ ի՞նչ
զատիր լոյսեր չէ վառած և մարդը քանի՞ քա-
նի անգամ չէ մոլորցուցած։ Այս կենաց
ճամբուն մէջ մեր փրկութեան թշնամին մար-
դուն ամենէն փափուկ զգացումները և Աս-
տուծոյ մարդուն շնորհած անկշռելի շնորհքը,
այսինքն բանականութիւնը և հոգւոյն խնա-
յակութիւնը Աստուծոյ յաւիտենական բա-
նին զէմ ոգորելու յարուցած է։ և այն որ
ըսաւ թէ «Եղեր

՝ կատարեալք, որպէս և
Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է», նորա
ցուցուցած կատարելութեան ճամբան՝ կա-
տարելութեան հասնիլ ստեղծուած մարդուն
աչքին առջև անկասար ճամբայ մը համարել
տալու ինչէր ձեռք չէ տուած նոյն հակառա-
կորդը։ Մարդոյ կիսկատար հմտութիւնը և
նոյն Աբարչին անհուն խնամատարութենէն բա-
ստեղծուած բնութիւնը և բնութեան ան-
հասկանալի օրէնքը և միւնչև անգամ խղճի
ձայնը՝ որ նոյն իսկ Աստուծոյ ձայնն է, մարդ-
կային սկսար գաղանաց և ինքնահաւան ան-
սուութեանց խաղախակին մէջը սեղմելով՝ ի՞նչ
շինուս և սին թեներ չէ հնարած և երևակա-

յութիւնն ամենէն բարձր տեղաւանք հանել կարծել տալով՝ քանի քանի անգամ մարդք այն գեղեցիկ և վսեմ արարածը խելագարութեան մէջ չէ թողած։ Նա այդ ամենաշար հակառակորդը ինքզինքը ծածկելու համար օձի կերպարանքի մէջ մտնելէն սկսելով՝ իրաւաբանի, փաստաբանի, բնագէտի, իմաստասէրի, աստուածաբանի և մինչև յաւոյ հրեշտակի կերպարանքները կ'առնէ՝ Աստուծոյ եկեղեցիէն՝ կամ թագաւորութենէն, այսինքն կենաց ճամբէն մարդը դուրս ձգելու համար։ Այս փորձութեան աշխարհին մէջ Քրիստոսի կենաց հակառակ՝ մեր նախահօրմէն սկսելով ինչ կենաց ծառեր շրջապատեր, որոնց պտուղներն՝ ինչպէս առաջին մարդոյն՝ նոյնպէս ամենուս մահաբեր կ'ըլլան միշտ։ Ասոնց շրջաց որ խաբուինք, և այն բաներուն՝ որ Քրիստոսի Աւետարանին փրկարար խրատներուն և Հոգւոյն Սրբոյ ներշնչութեամբը կարգուած եկեղեցւոյ արքաներն խորհուրդներուն կը հակառակին, զգուշանանք որ շրջայ թէ մեզ կենաց ճամբէն շեղեն։ Գիտնանք և վստահ ըլլանք որ ոչ բնութիւնը, ոչ բնական օրէնքը, ոչ գիտութիւնները, ոչ ոգեղէն իմաստասիրութիւնը չեն հակառակիր բարոյական մարդուն թէ՛ անցաւոր և թէ՛ անանց կենաց մէջ ունենալիք երջանկութեանը համար ամենայնի Աստուծոյ փարգապետութիւնը և Օրէնքին։ և թէ որ հակառակ երևին՝ գիտնալու ենք որ չէ թէ բնութիւնը

կամ անոր օրէնքն են հակառակող, հապա մեր կիսկատար գիտութիւններն ու հմտութիւններն են. և քանի որ մարդը յառաջ երթայ գիտութեանց և ուսմանց մէջ, այնչափ լաւ պիտի ճանչնայ զԱրիստոս։

Հոգւոյ փրկութեան համար պարտուպատշաճ օրէնքները Աստուած իր յայտնութեամբը շնորհած է մեզ։ Այս օրէնքները անաղարտելի են. և որովհետեւ մարդս այս աշխարհքէն պիտի անցնի, մարդուս աշխարհային կենաց բարեաց կառավարութեանը համար մեր ճանչցած ու յարգած ամ և իւրէ կարգ և կանոն՝ որ ըստ պիտոյից կը փոփոխին, իրենց սկզբունքը ի սկզբանէ մինչև յարգ Աստուծոյ բրած Յայտնութիւններէն առած են. և միշտ յարաբերութիւն ունեցած են կրօնքի հետ, ինչպէս մարմինը հոգիին հետ։ Իւր որովհետեւ հոգին և մարմինը միասորեալ՝ մի և նոյն մարդ կազմին էակը կը կազմեն, որչափ որ հոգւոյ և մարմնոյ պիտոյքը զատ բաներ ըլլան, և կայսերը՝ կայսեր ու Աստուծոյն՝ Աստուծոյ տալ հարկ է, այսուամենայնիւ մարմինը հոգիին և հոգին մարմնոյ համար Աբարչին առջև պատասխանատու են. և քրիստոնէին աշխարհային կեանքը յաւիտենական կենաց հետ անանկ յարաբերութիւն մ'ունի, որ ըստ ամենայնի պատասխանատու է. ուստի ան բանն որ բարոյապէս մարդուն վնաս կը բերէ, անոր հոգւոյն ալ վնասակար է, և ճշմարիտ օգուտն

այն է՝ որ մարմնոյն ալ հոգւոյն ալ միանգամայն օգտակար է. այն օրէնքը որ հոգւոյն օգուտն է՝ մարմնոյն վնասը չկրնար ըլլալ. և ըստ որում Քրիստոս հոգւոյն համար պէտք եղած օրէնքը շնորհած է, մեր աշխարհային ընկերութիւնը բարեկարգելու համար չենք կրնար և չեն կրցած գտնել այնպիսի օգտակար օրէնք մը՝ որ Քրիստոսի օրինաց սկզբունքէն տարբեր սկզբունք մ'ունենայ։ Եւ սակի չեն կրնար իրաւունք ունենալ անոնք որ մարդկային ընկերութեան վիճակը բարւոքելու համար, Քրիստոսի Եկեղեցւոյն օրինաց տարբեր աղբիւրներէ օրէնք քաղել կ'ուզեն։ Ճշմարիտ քաղաքականութիւնը և ամէն ազատական օրէնք ու սահմանադրութիւն Աստուծոյ Յայտնութիւններուն մէջ մեզի շնորհուած օրէնքներէն քաղուած է (¹)։

(¹) Այս վերջին ժամանակները մարդկային ընկերութեան վիճակը բարւոքելու համար շատ եւեռի մարդիկ շատ տեսակ օրէնքներ հրատարակեցին, և սոնց շատերուն կենցաղագուտ յատկութիւնները անուանկ կարծել տուին շատերուն որ սոնք ոչ Աստուծմէ՝ այլ օտար աղբիւրներէ առնուած են. անոր համար Եւրոպայի շատ կողմերը ամբարիշտ գրուածներով լցուեցան և Քրիստոսի Եկեղեցւոյն դէմ մարտուիլ սկսան, առանց գիտնալու թէ չկրնար ըլլալ աղէկ բան մը առանց Քրիստոսի և թէ Եկեղեցւոյ հաւատքն ու օրէնքը ամէն աղէկ բանի վերջնական ու անարատագրելի խմբագրութիւնն է Հոգւոյն Աստուծոյ մատամբ գրուած։ Այս նոր մարդիկը ամէն բարեկարգութեան օրէնք բնութենէն և անոր օրէնքէն առնել կ'ուզեն. ինչպէս այս օրերս ալ Պ. Կ. Փանոսեան "քարտահաթը մեհիմմէ" անուանով հրատարակած տետրակին մէջ, և Առաջք Պատեաց օրագրին հրատարակիչը իր թերթերուն մէջ մարդկային ընկերութիւնը բարեկարգելու համար բնական

Թող այնպէս որչափ որ ուզեն՝ թէ բնական օրինաց կատարելու է մարդ. ես բընաւ վիճաբանութիւն ընելու միտք չունիմ. քանզի, ինչպէս կ'ըսէ երևելի հեղինակ մը, վիճաբանութիւնը լեցունել կարծած անդունդները չլեցունելէն զատ՝ աւելի խորունկ կը պեղէ, և կարծեաց տարբերութեան վրայ անձնասիրութեան յամառութիւնն ալ կ'աւելցնէ։

օրէնքներէն կարդ կանոն փնտռած առնենին՝ Եկեղեցւոյ հաւատոյն և խորհրդոցը գեմ կ'երթնեն. մեկը կոչնակի սկզբնական մեզ բը և Աստուծոյ առաջին կնոջ տուած անէծքը կ'ուրանայ և երկուքը շիկոյ կ'ըսէ. և միւսը ամուսնութեան պատկի խորհուրդը Եկեղեցւոյ խորհուրդ, հեռանալու հաւատոյ մասն շհամարիր. և Եկեղեցին տուն Աստուծոյ չէ կ'ըսէ. որով հեռացունել կ'ուզէ թէ մարդոց կատարեալ բարեկեցութեանը հակառակ՝ Յաւիտենականին Աստուծոյ Յայտնութիւնն եղող Ս. Եկեղեցին ունի այնպիսի Հաւատոյ մասունք. որոնք բնական օրինաց վրայ հիմնուած չըլլալնուն՝ մարդոց բարեկարգութեանը համար կամ անպատեհ են. կամ աւելորդ և կամ հակառակող են. և թէ լուսոյնը հնարելու համար պէտք է բնական օրինաց ուշադիր ըլլալ և անկէ դաս առնել։ Զատաջինն այնպիսի գրուածներ նոյն իսկ յաւիտենական ճշմարտութիւնն եղող Քրիստոսի աշխարհք եկած առնը. Աքրոց առնը. Հայրապետաց առնը. և մինչև հիմայ ասկոպ ասկոպ լուսած խօսուած. հրատարակուած և պատասխանները ամէն անգամ տրուած ու հերքուած և հազար անգամ հաստատուած ճշմարիտ և անհերքելի փաստերով ջրուած ըլլալնուն՝ բանի տեղ չդրինք. բայց տեսնելով օրէ օր մեր բարեպաշտ ժողովրդոց մէջ յարուցեալ դայթակղութիւնները՝ կրօնական ժողովոյն հրամանաւը հարկ համարեցանք այս փոքրիկ խորհրդածութիւնս նուէրն ընել մեր սիրելի Ազգին. որուն հոգեւոր և մարմնաւոր երջանկութիւնը անձնանուէր ըլլալու առաջի Աստուծոյ և մարդկան ուխտ ընող Եկեղեցականներէն մեկն ըլլալու երջանկութիւնն ունեցեր եմ։

Ուստի տեսնենք թէ ինչ է բնութիւնը. և որն է բնական ծանուցեալ օրէնքը, որով կարող բլլանք ամէն Աստուածային Յայտնութիւններ շափել, կշռել, չհաւնիլ և նոր օրէնքներ շինել. կարծեմ ոչ ոք աշխարհիս մէջ համարձակած է բնութեան սահմանը ճշդիւ տալու, որովհետև ոչ ոք կրնայ ըսել թէ՝ բնութիւնը ես գիտեմ, այս ինչ է. բնութիւն բառը՝ անհասկանալի հրաշքի մը անհասկանալի անունն է. ուստի ամէնքս մէկտեղ միայն սա գիտենք թէ տիեզերաց անհասանելի Արարչին իր իմաստութեանը վայելուչ մէկ աքսանչելի գործն է, որ մեր խելքէն բարձր օրէնքով մը՝ որ իր կամքէն ծնած է, զբնութիւնը կը կառավարէ. որ գրած է օրէնք և կարգ ահագին տարածութեան մէջ բիւրաւոր աշխարհներու իրենց շրջանը մեքենայաբար կատարելու և ամէն արարածներուն իրենց պաշտօնը անվրէպ կատարելու համար։ Միայն մարդն ստեղծեր է այս տիեզերքին մէջ՝ օժտելով անմահ հոգիով մը, որուն ձակտին վրայ, ինչպէս գիտնական մը կ'ըսէ, Աստուած իր իմաստութեան անհուն ակիրատութեան մէջ համարեա՛ թէ՝ գնդասեղի մը ծայր թաթախեր դպուցեր է, և մարդն ունեցեր է բանականութիւն և խմացականութիւն. ասով մարդս ոչչափ որ հրեշտակներէն ետքը անհամեմատաբար միւս արարածները մէկ կողմանէ կը գերազանցէ, միւս կողմանէ Աստուծոյ անհուն իմաստութեան գործոց խորքը մէջ այնչափ սահմանաւոր և տկար է. քանզի մարդ

գը այնչափ չգիտցած բաներ ունի, որ եթէ
չգիտցած բաներըը իրարու վրայ շեղջակուտես,
բոլոր տիեզերքը կը լեցնէ։ Ինքնութեան մէջ
մարդուն մօտագոյն բանն իր անձն է, մենք
դեռ ինքզինքնիս չգիտենք, դեռ չենք գիտեր
կատարելապէս ինչպէս կը խօսինք, ինչպէս
կը շարժինք և ինչպէս կ'ապրինք, կը խորհինք
և այլն. եթէ բոլոր բնութիւնը միլիոնաւոր
մասերու բաժնես, և մէկ միլիոներորդ մասը
ձեռք առնես, և այն մասին մէջ տակաւին
որչափ հազարաւոր բաներ կան՝ որ տակաւին
չգիտենք թէ ինչ են և ինչ զօրութիւններ
ունին։ Մեր ամէն առեն շնչած օդին, խմած
ջուրին, կոխած հողին, տեսած քարերուն,
փայտերուն, երկաթներուն և այլոց մէջ ինչ
յատկութիւններ և ինչ հազարաւոր զօրու-
թիւններ կան, որոնց խիստ մեծագոյն մասն
անծանօթ է մեզի. դեռ երբէք հասկցան մարդ-
իկ երկրաբանական զօրութիւնը, որ բնու-
թեան Արարիչը 'ի սկզբանէ աշխարհի նիւ-
թերուն մէջ դրեր էր. դեռ մէկալ օր ջրոյն,
օդոյն մէջի կազերուն վրայ քիչ մը տեղեկու-
թիւն ստացանք. և արդեօք մեր ճանչցածնե-
րուն մէջ դեռ որչափ հազարաւոր բաներ
կան որ անծանօթ են մեզ. ուրեմն բնու-
թիւնն բան մեծի մասին մեր խելքէն բարձր ըս-
քանչելի գործ մըն է, և չէ թէ ճանչցուած
չափ մ'է, որով կարողանանք գերբնական
հոգի ունեցող մարդուն համար Աստուծոյ
յայտնած օրէնքները չափել և արբագրել.

չեմ ըսեր թէ բոլորովին անծանօթ է բնական օրէնքը. Յաստուծոյ մեզի շնորհած խմացակա-նութեան շնորհիւ ոչ միայն այս վերջին ժա-մանակներս, այլ շատ գարերէ ի վեր շատ մը նշանաւոր մարդիկ բնութեան անհունու-թեանը մէջ խիստ անենշան, բայց մեր աչքին առջև շատ նշանաւոր գիւտեր ըրած են, ո-րոց մէկ մասը հիմայ մենք չգիտենք. մէկ մա-սը նորէն լուսաբանած և մաս մ՚ալ նորէն գտնուած են։ Յայս խմաստնոց ամենէն երե-ւելիները իրենք թող խօսին թէ ինչպէս խա-բասուզուած և յափշտակուած էին այն ան-հուն գաղտնեաց մէջ և ինքզինքնին որչափ խեղճ և ապէտ կը համարէին։ Արեմն ինչ-պէս պիտի չափենք Յաստուծոյ շինած Նիկեղեց-ոյն խորհուրդներն ու հաւատքը, մինչդեռ աշխարհի մէջ Յաստուծմէ զատ ուրիշ ճշմար-տութիւն չկայ. մեր ամէն գիտութիւնը, քան մեծի մասին, հաւանականութեան վրայ հիմ-ուած է, և մեր պարծենցած երկրաչափական ապացոյցն անգամ բացարձակ ճշմարտութիւն չէ. երկրաչափութեան խարխսին եղող գծին սահմանն է «երկու մակերևոյթներու իրար կտրած տեղը՝ որ ոչ լայնութիւն ունի և ոչ խո-րութիւն.» (¹) ասիկայ որչափ ապացուցական տեսութիւն մըն է, գարձեալ հաւանողական ճամբով մըն է, և ոչ գործնականապէս ապա-ցուցական. քանզի եթէ ապացուցական ըլ-

(¹) Դուն. Տես Բասքալ և Մարիոս Հափքին։

լար, պիտի կրնայինք գծել այնպիսի գիծ մը՝ որ ոչ լայնութիւն ունենար և ոչ խորութիւն։ Մարդուս ամենէն մօտն իր անձն է, ըսինք, և աշխարհի մէջ ամենէն ցանկալի բանն իր առողջութիւնն է. Հիպոկրատես սէն և անկէց առջի ժամանակներէն ի վեր իմաստուն մարդիկ կ'աշխատին, կը փորձեն և կը գրեն և դեռ ամենաթեթև հիւանդութեանց վճռական դեղը չեն գտած. այս ամենակարևոր կենցաղագուտ արհեստն ալ ոչ ապաքէն հաւանականութեան վրայ հիմնուած է, նմանապէս միւս գիտութիւնները։

Ուստի պէտք չէ՞ բնութեան օրէնքները հասկընալու ջանալ և գիտութեամբ զարգանալ. այո՛, և այնչափ կարևոր է՝ որ գիտութիւններն արհամարհողը՝ նոյն ինքն Աստուծոյ սքանչելիքն արհամարհած կ'ըլլայ. և այս գիտութեանց մէջ որչափ յառաջանայ մարդ, այնչափ լաւ պիտի համոզուի թէ բան չգիտէ (1)։

Մարդուս այդ օրինաւոր, բայց անյագելի հետաքրքրութիւնը և յառաջ երթալու

---

(1) Յամանակ մը գիտցածներնուն վրայ մեծ համարմունք ունեցող անձինք՝ Աստուածաշունչին մէջի մինչև այն ատենը իրենց անծանօթ բնական իրաց վրայ գրուած խօսքերը կը ծաղրէին. Աստուածաշունչին մէջ գրուած է՝ թէ Աստուած առաջ լոյսն ստեղծեց, ետքը արեւը, և արեւմտեան չգիտեին թէ լոյսը զան մարմին մ'է, անոր համար կը ծաղրէին. նմանապէս Աստուծոյ Ջրհեղեղն մէջի գրած կապերուն վրայ տակնու

բաղձանքը մեզի կ՚ապացուցանեն թէ մարդն այնպիսի վիճակի մը մէջ չէ որ այս աշխարհի մէջ ամէն բան ինքնիրեն ամենայնիւ հասկանալու կարող ըլլայ. ինչ որ ալ բանք, ինչ որ ալ գրենք Պօղոս առաքեալն խօսքն է ճիշտ մարիտ. «այժմ ընդ հայելի օրինակաւ», իսկ այն մեծ օրը՝ յորում մեր հոգին այս վարագոյրը՝ այսինքն մարմինը թողու՝ «յայնժամ դէմ յանդիման» պիտի տեսնենք Ն. աստուծոյ սքանչելի գործերն այնպէս, ինչպէս որ են։

Ն. յո, պէտք է որ գիտութեանց մէջ յառաջ երթանք և ամէն ջանք ընենք մեր սուրբ կոչմանն արժանի ըլլալու. բայց ինչպէս. ոչ այն նանրահաւատ անձանց պէս՝ որ ուսմանասիրելու դարուն վերջերը իրենց ամբարտաւանութեամբը և ակնախտիղ գիտութեամբը յոխորտանալով ամէն բան անցնելու առնելին կարծանեցին, և ինքնուսանելու դարուն սկիզբը իրենց անխոհեմութեամբ զոհ եղող բիւրաւոր մարդկան արեան հեղեղներուն վրայ ձեռն ի ծնօտի եղեալ՝ ըրածներնուն անակնուելի արդեանցը վրայ իրենք ալ սոսկացին, և աշխարհը խաւարէն հանել կարծելով՝ ամբարշտութեան ու ամբարտաւանութեան և անողոքելի բռնաւորութեան քաոսին մէջ գլորեցին. թէպէտև Ն. աստուծոյ մարը անոնց վրայ ցաքը սքանչելապէս կանգնեց։

Ն. շնարհս՝ կամ այս մեր կեանքը նախնեաց կամ երկրորդական դպրոց մըն է. մենք ալ ուսանող ենք. ուսմանք և գիտութիւն

չասվելիք ծուլութիւն է, և ծուլութիւնն ալ մահացու մեղք. բայց գպրոցին վարուց համար շինուած կանոնագրութեանը հպատակել և վարժապետին հրամանացն հնազանդիլ պէտք է. գպրոցն՝ ուսման կարգ մըն ալ ունի, որով միայն կարող են աղայք իրենց ուսանողութեան շրջանը պատշաճապէս կատարել. այն աշակերտը՝ որ ոչ կարգ կը պահէ և ոչ կանոն, ինքնիրեն կանոնագրութիւններ կըստեղծէ, և սին հեռաբերբրութեամբ ու խանգարեալ երեւակայութեամբ սանդուխէն ասպիճանաբար վեր ելնել չուզէր. ու ինչպէս իր վարքը՝ այսպէս ալ ուսման փափաքը անկանոն ըլլալով՝ քերականին կամ քերականութեան հոլովներուն եզերքը երկրագունակի կամ աստղաբաշխական գործիքներու ձեւեր կը գծէ, և գպրոցէն ելած ատենը առանց քայերուն հրամայականն ու ստորադասականը գիտնալու՝ երեւակայութեան մէջ քնալութեան, քիմիագիտութեան, ևայլն գործիքները խառն ի խուռն կը խճողէ։ Ինչպէս գպրոցին մէջ, անանկ ալ Աստուծոյ աբբայութեանը մէջ Բրիստոսի Տէառն մերոյ հրամանին համեմատ խնարհ աղու մը պէս մնելու է. «Եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկըսի, ոչ կարէք մտանել յարքայութիւն երկնից»։

Ինչու համար փիլիսոփայութիւնը մինչև Տէքարդ խառնածին հրեշ մըն էր. վասն զի իմաստասէրը ամենագէտ կը ձեւանային, հը-

պարտ էին, ինքնահաճ էին, և առանց կռ-
խած տեղերին գիտնալու. բարձրերը կը
թռչէին. և իրենց կիսկատար հմտութիւն-
բովը մարդոց սրտին վրայ բռնանալ կ'ուզէին.
արդի իմաստասիրաց իմաստնագոյները՝ որ
քան սակաւ սահմանի մարդկային մտաց՝ բնու-
թիւն ալ, բնութեան օրէնքներն ալ շատ մը
թեթեւամիտ ու կարծեցեալ իմաստուններէն
շատ աւելի աղէկ կը ճանչնան, մարդկային
հանճարոյն բարձրագոյն ոլորտն եղած առեն-
նին ալ՝ իրաւամբ ինքզինքնին իբրև մանուկ
կը գտնեն. այդ բարձրութենէն ի՞նչ սքանչելի
կերեւնայ անոնց մտաց աչքին Պրիսոս և իր
սուրբ Նիկոդեմին. որչափ կը հիանան, երբ
կը տեսնեն որ այս տիեզերքն այնչափ գեղե-
ցիկ օրէնքներով կառավարող Արարիչը՝ վախ-
ճանական իրաց վրայ այնպիսի սքանչելի կար-
գեր դնելէն ետքը՝ յաւիտենական հոգի մը
տածող մարդուն համար մեծ յայտնութիւն-
ներով վասն օրէնքներ պարգեւեր է. մարգա-
րէներ, պատգամներ, կանխասաց գուշակու-
թիւններ, հմուտ պատմագէտներու, քաջ
երկրագէտներու քննութեամբը քանիցս քըն-
նադատուած և պարզուած են. ի՞նչ ահագին
ճշմարտութիւն. կարգմ մարգարէութիւն-
ներն. գնա՛ Նգիպտոս, Պաղեստին, Տիւրոս,
Բաբիլոն, և ահա այն մեծ ազգաց ոսկորներն
և մեծագործութենէն մնացեալ տեղերուն մնիր-
քը մէյմէկ անբարբառ վասն ու ճշմարիտ ար-
ձանները են մարդարէից գուշակութեանցը.

Միայն բեր հին խնամատարաց ամենեն նշանաւորներուն տագնապը՝ որոնք խաւարի մէջ ի խարխափս մարդուն հոգիին և մարմնին ներգործեալ մեծաւ բանալին՝ այսինքն բանը կը փնտռէին, և տեսա Եղեզեկէլի այրին մէջ Աստուծոյ յաւիտենական Բանը մանկացեալ, այո՛ մանկացեալ մարդոց փրկութեան համար մանելու ամենապատշաճ հասակին մէջ։ Աչքիդ առջին սա այն ահագին հրաշքը՝ որ տասներկու ձկնորներով մարդկային ազգը իր յաւիտենական եղերքը մղեց. Գենեսարեթի լճակին ձկնորը, Զեբեդեայի խորանակարը, ազգատոհմ Սիմոնը արևելից և արևմտից ահագին պատութեանց մէջ. Աթենացւոց Աբիսպագոսին և Հռովմայ փիլիսոփաներուն և կայսրակնալեզու ճարտարախօսներուն մէջ մտնելով՝ քանի մը պարզ խօսքերով աշխարհքը կերպարանափոխ ըրին։ Աչքիդ առջին բեր զանոնք զօրացնող ամենազօր հոգին, և Աստուծոյ խնամատութեան աշխարհի խնամատուներուն վրայ ըրած յաղթանակը մի մառնար. մի մառնար այն բազմաթիւ քրիստոնէից աշխարհս ամէն կողմը գետահեղեալ արեան ուղիները՝ որոնք կարծես թէ դեռ մեր ականջին տակ կը խոխոջեն, և իրենց պատուական արեամբը ներկեալ Եկեղեցւոյն դէմ՝ և իր դէմ հայհոյութեանց համար բողոք կը բառնան Եկեղեցւոյ Գլխոյն Քրիստոսի առջև։ Աչքդ անցո՛ր ազգայ և ազգաց պատմութիւններն և տես թէ յաւաջադիմութեան կառքը ե-

զոր ճշմարիտ և ներքոյ քաղաքականութիւնը ուստի ծնունդ առեր է։ Որ առաջին անգամ արտասանեց այս աշխարհքին մէջ “ազգաց իրաւունք” մոգական բառը. ո՞վ բերաւ սուրբ սիրոյ ուղղութիւնն մարդասիրութեան. ազատ հատարակապետութեամբ պանծացող Հելլենը Ք. յառաջդին փառք կուտար ըսելով “Հելլէն ծնեալ եմ”, և բոլոր ազգերը բարբարոս կ՚անուանէր. խրոխտ Հռոմայեցին իրմէն զատ ուրիշ մարդ չէր սիրեր. ուրիշ մը իրեն համար արի, և ուրիշներուն համար անարի կ՚ըսէր. ամենէն երևելի հանճարները միշտ հայրենասիրութիւն կը հանէին, իսկ եղբայրասիրութիւն և մարդասիրութիւն բաց ի Քրիստոսէ ոչ ոք արտասանեց։ Իրաւունքը հզօրագունին էր, և տկարը արծամատին շղթայակապ ստրուկ։ Կարդա՛ Սուրբ Գիրքը, բայց ոչ հայրութեամբ և արհամարհանօք կարդացողներուն ակնոցովը, հապա սուրբ Հարց խոնարհ աչքովը և անոնց ու Քրիստոսի հեզութեան հոգիովը. տե՛ս թէ ամէն մէկ խօսքերն ինչ անպատում ճշմարտութիւններ կը պարունակեն. բոլոր տառերն Քրիստոսի եկեղեցւոյն հին և նոր թշնամեաց դէմ ահագին պատասխաններ են. մէյմէկ առակներով մարդոց ամէն հպարտութիւնն ու նախապաշարմունքը կը ջնջէ. ամէն արեգակ ներկ լուսաւորագոյն լոյս մը կուտայ մարդուն հոգիին. ազգաց իրաւունքն և մարդասիրութիւնը հասկնալու համար՝ հերիք է որ

Սամարացի Հանապարհորդին առակը կարդաս. որ մեկն ասեմ, Յերեզեկիելն սկսելով Երիսաղեմի հետ մինչև գերեզման գնա. սեռ թէ այն երկրպագելի քարը ինչպէս հին աշխարհքին պանծացեալ խնամատուութեանը գերեզման եղեր, և նոր աշխարհքին որբանը։

Ինչպէս Նեւատոն, Խասկալ և ուրիշ հրամատագոյն անձինք՝ բնութեան անհունութեան խորոց մէջ իբրև խոնարհ ուսանող մտնելով՝ քանի որ յառաջ գացին տեսան Աստուծոյ հրաշալի ձեռքը, և նոյն իսկ Հնութիւն ըստուածը գերբնական գտնելով՝ հրաշք ազազակեցին ու երկրպագութիւն ըրին Նոր՝ որ ի վեր է քան զմիտս և զիսորհուրդս մեր, այսպէս դու ալ մտիր Աստուծոյ Տնօրէնութեանց Տաճարին մէջ, և տես թէ անշուշտ արարածոց իրենց նպատակին մեքենայաբար ծառայելու համար այդչափ բարձր օրէնքներ գնող Աստուածը՝ Հոգևոր Իսկին մարդուն համար ինչ բարձրագոյն օրէնքներ դրեր է, որոնցմով առ ինքն՝ այսինքն մեր բուն նպատակը կը կոչէ զմեզ. ոչ թէ այդ բնական ու գերբնական օրէնքներն իրարու կը հակառակին, հապա մեկը քան զմիւսը վեհմագոյն է, ինչպէս մարդը միւս արարածներէն։ Յթէ Աստուած ուզէր որ մարդս միայն բնական օրէնքներով կառավարուի, այդ Օրէնքները սովրեցնելու համար մեզի յայտնութիւններ ալ տալու էր, ինչպէս Աստուածային օրինաց համար տուաւ. վասն զի մենք մեր

խելքովք մեռելով՝ հինգ վեց հազար տարիներ
է ի վեր ոչ միայն կատարելապէս, այլև ոչ
բաւականապէս հմտութիւն շունեցանք ա-
նոնց վրայ. և որչափ որ Աստուածային օրէն-
քը յայտնութեամբ իսկ մեր խելքէն շատ
բարձր է, բնութիւնն ալ բոլոր մեծի մասին
մեզի գերբնական բան մը է։ Հետևաբար մեր
մը չէ եղած որ բարոյական մարդը բնական
օրինաց կատարելու։ առջի գարերու մարդիկ
առաջին մարդոյն կրօնքը ունէին. ոմանք
ինչպէս որ էր, այնպէս. և ոմանք բերին բե-
րան անդիր աւանդութեան և տարակսելի
թեան պատճառաւ այլափոխեալ և ապաւաղ-
եալ ունէին այն կրօնքը. միայն Աստուծոյ բնու-
թեալ ժողովրդին մէջ մնաց ճշմարտութիւնը, և բոլոր աշխարհի մէջ ճշմարտանման
շինուածաւորով կերպարանափոխ եղաւ. մարդոյ միտքը, սիրտը այնչափ խաւարի մէջ մնաց, և Սկեպտիկեանց, Սուս-
տիկեանց, Էնեսիդեմեանց խելագարութիւն-
ները այդ խաւարը ճիւաղներով լեցուցին. աշխարհի երեսը կէս գիշեր էր, ուստի և կէս գիշերուն ծագեցաւ ի Բեթ-
լեհեմ Յաւետարանից լոյսը՝ Քրիստոս. ու մեղ-
քով, ապիրատութեամբ, ամբարտաւանութեամբ մարդուն ապականեալ սիրտը, միտքը, հոգին՝ Հոր, Որդւոյ և Հոգւոյն հետ միացնելու
օրէնքը տուաւ, և առաջին մարդոյն կորսընչացուցած կեանքը Աստուածապէս նորոգեց։
Ուստի ինչ անուն որ ունենայ, կատարելու-

1/13883

թեան օրէնքը, ըստ բնական, գերբնական, մարդիկ յինքեանց չկրցան գանել և Աստուծոյ յաւիտենական իմաստութիւնը ճանչցուց. եթէ եղան Փիլիսոփայք վերջը այնպիսի մարդիկ որ նոր օրէնք չենել ուզեցին, չկրցան նոր ազէկ բան մը հնարել. բոլոր ազէկ բաները Փիլիսոփայն Աբրահամէն օրինակեցին, իսկ իրենց յաւելուածն ուրիշ բան չէր, բայց եթէ ազգային կամ բռնաւորական անուղղութիւններ։ Փիլիսոփայն միայն ճանչցուց թէ Աստուած սէր է, և առաջին անգամ անձնանուիրութիւնն ու եղբայրսիրութիւնը անձին արանչելի օրինակաւն ինք քարոզեց։ Զատութեան երկու ծառ կը յիշեմ. մէկը՝ տանուած դար առաջ Պոզդոմա անկուած, և միւսը՝ դար մը առաջ Փարիզ անկուած։ Առաջինին վրայ անարատ արիւն մը կը հոսէր մարդկային փրկութեան համար, իսկ երկրորդին արմատները բիւրաւոր մարդոց արեան հեղեղովը կ'ոռոգուէր ազատութեան պատրուակին տակ՝ փառասիրութեան և վրէժխնդրութեան ոգին գոհ ընելու համար։ Մարդն առանց Փիլիսոփայի վայրենի է և կատաղի. ճշմարիտ ազատութիւնը Փիլիսոփայ բերաւ Աշխինքէն. ինքն իսմով ազատ մարդը գնա՛ վայրենիներուն մէջ և տե՛ս. բայց եթէ ըսուի որ Փիլիսոփայի հաւատացող շատ մը ազգեր վայրենի ու կատաղի չեն հիմայ, կը պատասխանեմ թէ Փիլիսոփայէն օրէնքներուն մնան եղած քաղաքականութեամբ դէս

նացան անունք։ Աբրահամս քան առաջին անգամ, զուք եղբարք էք։ և Սահմանագրութեան հոգին Պետրոսին այս խօսքն է, «ապաւորութիւն կամիմ, այլ ոչ սուահակութեամբ»։ այս է ճշմարիտ քաղաքակրթութիւնը, և երանի թէ անոր հիմնադրին անձնանուէր օրինակին հետևելով շահախնդրութիւնը և անձնական կիրքերը մերկանային մեծ ազգերը։ այն ատենը շուտով յինչ հանուրս պիտի ծաւալէր։ թող թնք խօսի ժամանակիս քաղաքակրթաց երեւելագոյն Վիկտորը, «քանի որ քաղաքակրթութեան մէջ յառաջ երթանք, այնչափ Աւետարանին կը մօտենանք։»

Ի՞նչպէս քաղաքակրթութիւնը, անանկ ալ անոր շարժառիթն եղող ուսմունք և գիտութիւն Աբրահամի օրինակաւն յառաջ գացին։ Նրա է հին ատենը Նգիպտոսի և Նսիոյ մէջ և ուրիշ տեղուանք երևելի գիտնականներ եկան, և գիտութիւնը չկրցան ժողովրդախառն ընել հիմնակուան պէս, ասոր պատճառը միայն ապագրութիւնը չէ։ քանզի առանց ասոր ալ առաջ պիտի երթար գիտութիւնը։ ասոր փոխանակ մեր ազգին գրականութեան ոսկեդիմիկ դարուն մէջ տեսնուեցաւ։ երբ ապագրութիւն չկար, որուն փառաց պատուանդանին՝ այնչափ ժամանակ է դեռ ապագրութեամբ ալ չհասանք։ Ուրիշ մեծ պատճառ մը կայ, որ ապագրութենէ աւելի ապաւորութիւն ըրած է և կ՚ընէ միշտ քրիստոնեայ սիրտերու մէջ։ այս է՝ Աբրահամի

անձնանուէր սիրոյն օրինակը. այն Աստուծին կ'ըսեմ, որ գիշեր ցերեկ չէր դադարեր ամէն տեղ ուսուցանելէ։ Մանաւորապէս երախտագէտ ըլլալու ենք ասոր համար մեր եկեղեցւոյ Շրանաշնորհ Հայրց՝ որ Հայաստանի ամենաճախ հրդեհին մէջէն Քրիստոսի խաչն ու մեր գրականութիւնը, իբրև Հայ սրբութիւն երկու ճշմարիտ ամենապատուական ադամանդ, խալըսեցին ու մեզի աւանդեցին։

Ահա, սիրելի ընթերցող, թէ՛ երկնաւոր և թէ՛ երկրաւոր կատարելութեան ճամբան միայն այն է, որ հազար ու թ հարիւր տարի յառաջ մարդու ձայնով ըսաւ, "Ես եմ ճանապարհ և կեանք"։ այս ճամբան ընդարձակ չէ և մեծ թշնամիներ կան վրան. առաջին թշնամին դու ինքդ ես՝ որ Նախահօրմէդ քեզի ածանցուած հպարտութեամբ, անհնազանդութեամբ, այսինքն սկզբնական մեղքը ինքզինքիդ կը վերասես. աշխարհի փորձութիւններէն հետևած յուսահատութիւնն ալ երկրորդ թշնամի է քեզի. ոչ միայն ոտքիդ տակը, այլ և գլխուդ վրայ փուշեր պիտի ունենաս, և այս պիտի ըլլայ, քու փառաց պսակդ։ Երրորդ և ահագին թշնամին քու փրկութեանդ նախանձորդն է, որ միշտ աղուոր բառերով կը խաբէ զքեզ, և "գիտութեան ծառ" մը կը ցուցնէ քեզ, բայց ամբարտաւան գիտութեան. ուստի պէտք է որ այս ճամբուն մէջ Քրիստոսի հետ կապուիս. անոր համար հաւատացելոյ կա-

բաւանը, Աստուծոյ բնակարանը, Քրիստոսի բանակին՝ այսինքն Ս. Եկեղեցւոյ ծոցը մտնը, որպէս զի ապահով ըլլաս թշնամւոյն յարձակումներէն. Քրիստոս ինքն հոն է թէ իր անուանովը ժողովրդեան համար, և թէ որքաղաւ խորհուրդներուն մէջ. այս եկեղեցւոյն ամէն խորհուրդները, արարողութիւնները, սպասներն ու գործարանները անանկ հրեղէն տառերը են շարս կազմեալ գրուած, որ ուր որ գտնուս՝ քու պարտքերդ բարձրաձայնելով գրաշնուած կը տեսնես. Եկեղեցին՝ այս խորհրդաւոր մարմինը Երկինքէն կ'իջնի. գլուխը Քրիստոս է և իր մարմնոյն անդամներուն մէջ ներկայ է. այս հոյակապ տաճարը եօթը սիւն՝ եօթը խորհուրդ ունի. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Պատարագութիւն, Ձեռնադրութիւն, Պաշտ, Աղօթք։ Ո՞նչ տարբ և արանչելի են այս խորհուրդները. հոգւոյդ աչքովը նայէ Պարտչին, որ ինչպէս Ի սկզբան ջուրերուն մէջէն կը հանէր զաշխարհ, այսպէս երկրորդ անգամ Յորդանանու ալեաց մէջէն կը ծնանի վերստին ծնունդեամբ զմեզ ապահանելու հոգիս մարդկութեան. և ինչպէս Հայր. Որդի և Հոգի առաջին աշխարհն ու առաջին մարդն առեղծեց, Յորդանանու հատակաց վրայ Հայր. Որդի. Հոգի միաւորեալ սկզբնական մեղքէն արբելով երկրորդ անգամ զմարդն յանմահութիւն ծնած առնին Աստուծոյ և մարդկան յարաբերութիւնները կը նորոգեն. Ը-

դարութիւնը, Բանը և Սէրը կը տարբանան մարդոց մտաց, սրտին և հոգւոյն մէջ։ Հոգւոյն կենքը կը զարնուի երախային ճակտին, կուրծքին, կռնակին, ձեռքին և ոտքին՝ կեանց ճամբուն մէջ արիանալու համար. ահա, ի՞նչ զօրաւոր նեցուկ Քրիստոնէին։ Բայց քան որում դժուար է քրիստոնէին ճամբան և մարդս ալ միշտ սահող, ի՞նչ զօրաւոր դեղեր կը մատակարարէ Եկեղեցին խոստովանութեամբ և ապաշխարութեամբ։ Ալեկոծեալ ծովուն մէջ ընկղմելու վտանգին հասնող հոգւոյն ի՞նչ զօրաւոր փրկութեան տախտակ մըն է այն. անցելոյն համար քաւութիւն և թողութիւն, և ապագային մէջ բնաւ չգայթելու խոստումն. այնպիսի զօրաւոր դեղ մըն է, անանկ վստահութիւն մըն է՝ որ ամպարիշտ փիլիսոփային (վոլդէր) անգամ ազդեր է։ Այսը հետ է նաև Ս. Հաղորդութիւնը։ Պաքոն զուր տեղը կը փընտռէր բոլոր մարդկութիւնը լուսաւորելու միջոցը, երբ Քրիստոս հազար ութ հարիւր տարի յառաջ զայն հաստատեր էր. Սէր, եղբայրութիւն, կեանք յաւիտենական, ասոնք Քրիստոս ինքն է. մի և նոյն հացով և բաժակով ամէնուս կը բաժնուի միշտ անծախապէս և անբաժանելի կերպով իր մարմնոյն և արեան սեղանին բոլորտիքը ժողվելով՝ զինքը մեզի հետ կը հաղորդէ և զմեզ իրեն հետ կը միացնէ. Քրիստոսի մարգարէն յառաջ թէ Սաղոմոնին տաճարին, թէ Այսոզոնին, թէ

Աստուածին, թէ Աթենասին և թէ Հռոմայ ամենապիսի մեհեանները սեմագը վրայ զոհուած կենդանիներուն արեան ապուժովը, և թէ ուրիշ ամէն տեղեր մարդապահերու արիւնները «փրկու թիւն 'ի յարենէ» կ'ապաքսակէին, և Յոգեմատոյին վրայ թափուած արիւնը և սեղանին վրայէն մեր սիրտերուն մէջ սրակուած նոյն սուրբ արեան ցօղը առնոց բնեալ շիրցածը սքանչելապէս կը կատարէ։ Նոյնպէս դի գիրքս Հռակլեան Թրիստոս փեսային իր հարսին Եկեղեցւոյ հետ անքակտելի միութիւնը, ամուսնութեան Ս. Պատակը կը ցոլանայ Եկեղեցւոյ քեմին առջև՝ անձնուէր սիրոյ կապ հարսին և փեսին իրարու հետ, ինչպէս Թրիստոս իր Եկեղեցւոյն հետ։ Արդարև սրբազան խորհուրդ, ուր փոխադարձ անդառնալի ուխտից խունկեր կը բարձրանան առ Աստուած. ինչպէս Թրիստոս, իր մարմնոյն այսինքն Եկեղեցւոյն իրեն հետ անքակտելի միութիւնը համար աղօթք ըրած առեն անմահ արտասուաց շոգիները երկինք կը բարձրանային (1)։

---

(1) Պ. Գրանուանան իր տեսարանին մէջ. Պատակը Եկեղեցւոյ խորհուրդ պէտք չէ համարել կ'ըսէ. մինչդեռ ընդհանուր Եկեղեցին 'ի սկզբանէ անտի կը հաւատայ թէ Եկեղեցւոյ խորհուրդ է վերոգրեալ և աւելի զօրաւորագոյն պատճառներով. և քաղաքական ամուսնութիւնը անհրաժեշտ կը համարի։ Չեմ կարող հասկնալ թէ Աստուծոյ առջև ուխտագրուած գանգը և Աստուծոյ ու Յայտնութեանց ձայնին անդատարան կեցողը կը տարակուսի՞ քաղաքական խշխանութեան առջև ուխտաբանց գտնուելու միջոցներ հնարել. եթէ մեր Պատրիարքարանի

Եւ ահա հոգին սաբբ Եկեղեցւոյ վրայ սեռաւ ձեւեր կը կարդէ, որոց ընտանիք կ'ըլլայ Եկեղեցին. ձկնորսներով խնոսաւորեալն Տամբարձ Հոգին, Աստուծոյ Եկեղեցւոյն մէջ Աւաքեալներ, հայրապետներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ կը ձեռնադրէ. և ճշմարտութեան մեծ պաշտօնին նահատակ պաշտօնեաներ կը վառէ Աստուածային կայծակովք. Աւետարանը կրտարածի և Եկեղեցին կ'ընդարձակի ընդ ամենայն աշխարհ, և Աստուծոյ սիրոյն քով միլիոնաւոր յաղթականներ կ'երթան արքունեաց դրան առաջ։

արանց և կանանց վէճերը քարոզական ամենանուիրեալ և սրբահարութեան պակասութիւնէն է. հարցս Եւրոպայի մէջ գաշնադրութեամբ և սրբահարութեամբ ամենանացեալներու մէջ բացուած սակայն գաղութաւոր պատճառաւ ինչ է. զոր արեւելեան։ նա մանաւանդ Հայաս ակամիներ չեն լսած։ Պ. Փոնտեան Եկեղեցւոյ մէջ ամենայնիւ գոնեալ իբր Պասկը Եկեղեցւոյ խորհուրդներէն գաւրս հանելու բաւական պատճառ մը կը համարէ. սակայն արտաքսանելով Եկեղեցւոյ մէջ շատ մը աշխարհականներ գոնեալ ուրեմն համար Ձեռնադրութիւնը կամ Սաբբ կարգն ալ Եկեղեցւոյ խորհուրդ համարելու չէ, զոր մարդ անցնելն անգամ մը զբ է։ Պասկին Եկեղեցւոյ խորհուրդ շարժելը ամէն Բրիտանեի հարգարդութիւն առնելու արտաքսութեան պէս անհրաժարելի պայման մը շարունակեն հանելու կարգ։ շատ զէր յիշել թէ անարատ կուսութեան սխալ ալ Բրիտանի Աստուծոյ։ Հայրապետաց օրէն կրսկսի։ Աշնանութեան ցեղահատուածը կարձեցնել կ'առաջարկէ և կրսէ թէ մեզմէ առելի բարեկիրթ ազգեր այսպէս կ'ընեն. և կը մատնաց թէ խիստ քիչ անգամ կը պատահի այսպիսի բաներ անանց մէջ։ և ան ալ գոնեալ սակայն պատճառներով։ որուն համար շատ մարդիկ իրենց ամուսինները չեն կրնար այցելութեան անց արտիները մոցնել։ Բայց բանիր թէ անանք այսպէս

Եկեղեցւոյ ծոցը ծնեալ և սնեալ քիստոնէին հետ Եկեղեցւոյ խորհուրդներն ու աղօթքները սրբարանին վրայէն սկսելով մինչև զոգաղը, և ոնկէց անդին կ'ընկերանան։ Ո՞նչ սրտառուչ է այն վերջին խորհուրդն աղօթից, որ զբրիստոնեայն քաջալերելով կը յանձնէ յաւիտենական ոգւոյց։

Հոն երթալու ճամբան այս է, սիրելի ընթերցող. հոգևոր և մարմնաւոր կատարելութեան ճամբան, փրկութեան ճամբան այս է. մի թողուր այս ճամբան։ Բրիստոս ծընաւ զքեզ Եկեղեցւոյ ծոցը. զուն հոն մնալ արգանդին մէջ փակուած մանուկին կը նմանիս, որ թէպէտ չի տեսներ այս աշխարհքը, այս աշխարհքին արևը, օդը, ջուրը, հողը,

---

բան մը կընեն։ ինչ հարկ կայ անոնց հետևելու. ոմ ըստ թէ անոնք ամէն բան աղէկ կընեն. գիտակցան անձինք կը վկայեն թէ հետաւ տեղերու հաւնանք հետաւոր երկիրներ փոխադրուելով երբ սերմանուին զօրաւոր պատուղ կառնեն։ Բժիշկներն ալ կը վկայեն թէ ոչչափ հետաւէն ըլլայ ցեղահամարը. այնչափ զօրաւոր և առողջ կըլլայ ծնունդը. ասկէց ալ կը հասկցուի որ Եկեղեցին բնութիւն ծառացեալ օրինաց ջնհակառակիր. քանզի այս երկուքն ալ Աստուծոյ գործն է։ Ուրիշ մին ալ կրնայ թէ ծնողներու երկուքը բնական չէ. այս զարմանալի բնագէտին պատասխան չեմ տար։ քանզի աշխարհքին բոլոր հին և նոր և ապագայ սերունդներու երկանց ազգակիր բարձրագոյն կը պատասխանեն իրեն. մանաւանդ թէ այս կեանքին և թէ յաւիտենական կենաց մէջ պատասխան կը ծնանի. իսկոյն Քրիստոսի Տեառն մերոյ երկու կենաց վրայ ըսած խօսքն ի յայտնի է. «Վասն յոյժ ամ ծնցի, պատմեցի ի նմա։ զի հասակաւ է ժամ ծնանի։ այլ յոյժամ ծնցի զմանուկին։ ոչ ևս յիշէ զնեղութիւնն վասն իսկ ուրախութեանն։ զի ծնաւ մարդ յաշխարհս»։

բայց արևուն, օդոյն, ջրոյն բուսցուցած պտուղներով կը սնանի. այսպէս և դու Ս. Եկեղեցւոյ ծոցը Քրիստոսի շնորհքը, Հոգւոյն Պարգևները կը վայելես, առանց զանոնք մարմնոյ աչքով տեսնելու։ Օր մը մանուկը մօրը արգանդէն կը ծնանի, և ամէն բան կը տեսնէ. օր մը դու ալ անմահութեան մէջ պիտի ծնանիս և ամէն բան տեսնես. այժմ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման։ Աշխատէ՛ ու աղօթէ՛ որ Ս. Եկեղեցւոյ ծոցը մնաս ու չսահիս։ Աշխատէ՛ ու աղօթէ դարձեալ որ ջրլայ թէ նոյն Ս. ծոցին մէջ վնասակար զաւակ մ՚ելլաս, որ պարտաւորին զքեզ սահեցնելու. այս քու ձեռքդ է։

1864 Յունուար 21
ՅԱՆԳԻՆ Պատրիարքարանէ
ամենայն Հայոց։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ
ՓՈՒՆՂԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ